Դաս 1
Շարահյուսությունն ուսումնասիրում է բառակապակցություններն ու նախադասությունները, նախադասությունների տեսակները և նրանց կապակցությունը՝ շարադրանքը:

Նախադասություն

Նախադասությունը բառ կամ բառերի քերականական կապակցությունն է, որը միտք է արտահայտում և սովորաբար պարունակում է ստորոգական կապակցություն:

Նախադասության տեսակները
1. Պարզ նախադասություն- ունի 1 ստորոգյալ -**Բարդին օրորվում է:**
2. Բարդ նախադասություն- ունի 1-ից ավելի ստորոգյալ-**Բարդին օրորվում է, իսկ կաղնին անշարժ է:**

Պարզ նախադասությունները լինում են
- Համառոտ-ենթական և/կամ ստորոգյալը ոչ մի լրացում չունեն
  Շունը հաչում է:
- ընդարձակ-Ենթակայից ու ստորոգյալից բացի կան լրացումներ
  Ամեն առավոտ հարևանի շունը հաչում է:

Կախված նրանից,թե արդյոք նախադասության մեջ առկա են գլխավոր 2 անդամները՝ ենթական ու ստորոգյալը, թե նրանցից մեկը բացակայում է, նախադասությունները բաժանվում են ևս 2 խմբի
1. Երկկազմ- Երբ ենթական ու ստորոգյալը առկա են- Առավոտյան ձյուն է գալու:
2. Միակազմ- Երբ բացակայում է գլխավոր անդամներից մեկը, և հնարավոր չէ այն վերականգնել;

Երկկազմ նախադասությունները կարող են լինել նաև **թերի,** երբ ենթական կամ ստորոգյալը զեղչված են, բայց հնարավոր է վերականգնել-
Պարում եմ: (ես)
Նրանք դպրոց էին գնում, **մենք՝ տուն:*(էինք գնում)***

Միակազմ նախադասությունների տեսակները
1. Անենթակա-երբ չկա ենթակա, ու հնարավոր չէ վերականգնել-
   Վաղուց լուսացել էր: Անձրևում է:
2. Անդեմ-բացակայում է դիմավոր բայը
   ա)անվանական անդեմ-Սև գիշեր, և հուշեր, և խոհեր անհամար...

բ)բայական անդեմ-արտահայտվում է անդեմ բայերով՝ դերբայներով-մոռանա՞լ, մոռանա՞լ ամեն ինչ, ամենքին մոռանա՞լ, չսիրե՞լ, չխորհել,չափսոսալ..հեռանալ/// Չծխե՛լ

Բարդ նախադասություններ

Այն նախադասությունները, որոնք ունեն 1-ից ավելի ստորոգյալ, կոչվում են բարդ:

- Եթե բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց համազոր են և կապակցված են համադասական շաղկապով, ապա նախադասությունը կոչվում է **բարդ համադասական:**
- Եթե բաղադրիչ նախադասություններից մեկը մյուսին լրացնում է, ունի մյուսից կախում, նախադասությունը կոչվում է **բարդ ստորադասական:**

Պետք է հիշել, որ բոլոր շաղկապներից առաջ դրվում է ստորակետ, բացի «և, ու, կամ» շաղկապներից: Այս շաղկապներից առաջ դրվում է ստորակետ ՄԻԱՅՆ այն դեպքում, երբ ենթական փոխվում է: Իսկ եթե շաղկապը զեղչված է, զեղչման եղում դրվում է բութ(՝):

Բարդ ստորադասական նախադասության մեջ ստորադասական շաղկապից հետո եթե կա հարցական դերանուն, հարցական դերանունը չի կետադրվում:

Բարդ ստորադասական նախադասությունների մեծ մասը հնարավոր է փոխակերպել պարզ, դերբայական դարձվածով նախադասության: (Դերբայական դարձվածի կետադրությունն ու փոխակերպումները՝ հաջորդ դասին):

Դաս 2

Դերբայական դարձված

Դերբայական դարձվածը դերբայն է՝ իր լրացման կամ լրացումների հետ: Այն նախադասության 1 անդամի դեր կատարող կառույց է: Լրացումների քանակը որոշիչ չէ: Եթե դերբայը գոնե 1 լրացում ունի, ապա արդեն դառնում է Դերբայական դարձված:

Վերհիշենք հայերենի դերբայները: Հայերենում կա 4 դերբայ.

- **Անորոշ դերբայ**- ի՞նչ անել, ի՞նչ լինել- երգել, կարդալ, իջնել, բարձրանալ, բարձրացնել
- **Հարակատար դերբայ-**ի՞նչ արած, ի՞նչ եղած,-երգած, կարդացած, իջած, բարձրացած, բարձրացրած
- **Ենթակայական դերբայ-**ի՞նչ անող, ի՞նչ լինող- երգող, կարդացող, իջնող, բարձրացող, բարձրացնող
- **Համակատար դերբայ-**ի՞նչ անելիս, ի՞նչ լինելիս- երգելիս, կարդալիս, իջնելիս, բարձրանալիս, բարձրացնելիս

Դերբայները (բացի համակատարից), հոլովվում են այնպես, ինչպես գոյականները: Քանի որ ԴԴ-ի կետադրության համար մեզ առավելապես պետք է անորոշ դերբայի հոլովված տարբերակներն իմանալ, այստեղ միայն անորոշ դերբայը կհոլովենք.

Ուղղական-երգել(ը), կարդալ(ը) ի՞նչ(ը)
Սեռական-երգելու, կարդալու ինչի՞ (գիրք)
Տրական-երգելու(ն), կարդալու(ն) ինչի՞(ն)
Հայցական-երգել(ը),կարդալ(ը) ի՞նչ(ը)
Բացառական-երգելուց, կարդալուց ինչի՞ց
Գործիական-երգելով, կարդալով ինչո՞վ
Ներգոյական -——

Կան դերբայական դարձվածներ, որոնք տրոհվում են նախադասության մյուս անդամներից: Միջադաս դերբակական դարձվածները տրոհվում են 2 կողմից ստորակետերով, նախադասներն ու հետադասները՝ բութով: Դրանք են՝

1. **Անորոշ դերբայի գործիական հոլովով դերբայական դարձվածը (ի՞նչ անելով)**

   Ջերմորեն ժպտալով՝ նա մոտեցավ մեզ: (ձևի պարագա)//

   Լեռան հակառակ կողմն անցնելով՝ տեսա լիճը:

(ժամանակի պարագա)//

Ձյունը հալվում էր՝արևից տաքանալով:(պատճառի պարագա)//

Մենք, հասկանալով մեր սխալը, որոշեցինք այլ կերպ վարվել:(հիմունքի պարագա) //

Հանրահավաքի ժամանակ, հասկանալով մեր սխալը, մենք որոշեցինք այլ կերպ վարվել:

2. **Հարակատար դերբայով դերբայական դարձվածը (ի՞նչ արած)**

   Մութ սենյակում նստած՝ մտածում էր:(ձևի պարագա)//

   Նա, դեռ տուն չմտած, սկսեց արձակել վերարկուի կոճակները:(ժամանակի) //

   Մենք էլ մեր քայլերը կձեռնարկենք՝ կախված որոշումից:(հիմունքի)

3. **Անորոշ դերբայի տրական հոլովով դերբայական դարձվածը (ի՞նչ անելու). Սա կետադրվում է միայն այն դեպքում, եթե հետադաս նպատակի պարագա է:**

   Տղաներն անմիջապես դուրս եկան բակ՝ իրենց հյուրերին դիմավորելու *(համար, նպատակով)*:

Դերբայական դարձվածի դիրքը որոշվում է տվյալ պարզ (ինքնուրույն բաղադրիչ) **նախադասության մեջ: Նա գնաց սենյակ՝ անկողնում պառկելու, բայց այդ պահին դուռը ծեծեցին:**

Գոյություն ունեն դարձվածքներ և հարադիր բայեր, որոնք հաճախ են շփոթվում դերբայական դարձվածի հետ, և շատերը դրանք տրոհում են դերբայական դարձվածի պես: Իրականում դրանք դերբայական դարձված չեն, կայուն կապակցություններ են և չեն տրոհվում: (**աչքի ընկնել, անակնկալի գալ, հանկարծակիի գալ, վեր կենալ, շունչը պահել, գլուխ բերել, գլուխ**

պահել, տեղիք տալ, տեղի տալ, տեղը չգտնել և այլն*)*, օրինակ՝ Բոլորը **շունչը պահած** նայում էին մի կետի: **Վեր կենալով** նա մոտեցավ ինձ:

***

Հարակատար դերբայով դարձվածը կարող է լինել նաև որոշիչ: Այդ դեպքում կետադրության խնդիրը լուծվում է այնպես, ինչպես այլ որոշիչների դեպքում. կետադրվում է միայն հետադաս որոշիչը, ընդ որում՝ ոչ թե դերբայական դարձվածի, այլ հետադաս որոշիչի կետադրության կանոնով, օրինակ՝ **Սենյակի կենտրոնում դրված*(ո՞ր)*** սեղանին ծաղիկներ կային: Այդ վեպը՝(ո՞ր) **դեռ անցյալ դարում գրված*,*** կարծես այսօրվա մասին է պատմում:

Դերբայական դարձվածի տրոհման կապակցությամբ պետք է հիշել նաև հետևյալ կետերը

- Մեկից ավելի դերբայական դարձվածների խումբը կետադրվում է ամբողջ խմբի դիրքի հիման վրա, օրինակ՝ **Ձայրույթը հազիվ զսպելով** և **լարված հայացքով շուրջը նայելով՝** այցելուն հեռացավ:
- Բարդ նախադասության կազմում շաղկապին հաջորդող բաղադրիչ նախադասության մեջ թույլատրելի է համարվում առաջադաս դերբայական դարձվածի տրոհումը ոչ միայն բութով, այլև 2 ստորակետով, օրինակ՝ Մենք սպասում էինք, որ **տուն գալով՝** նա մեզ պատմի վերջին նորությունները: //Մենք սպասում էինք, որ**, տուն գալով,** նա մեզ կպատմի վերջին նորությունները:
- ԴԴ-ի հետ տրոհվող խումբ կարող են կազմել նրան համազոր բառերն ու բառակապակցությունները: Այդպես լինում է՝
  1.այն դեպքում, երբ ԴԴ-ն և նրան համազոր անդամը կապված են համադասական շաղկապով, օրինակ՝ Մայրը**, բազմոցին նստած** և **ժպտալով,** նայում էր խաղացող երեխային,

  2.այն դեպքերում, երբ ձևավորվում է ԴԴ-ով վերջացող առաջադաս խումբ կամ ԴԴ-ով սկսվող առաջադաս խումբ, օրինակ՝

  Արագ-արագ, ոչ մի խոչընդոտի ուշադրություն չդարձնելով՝ նա առաջ էր ընթանում:

- Տրոհվող ԴԴ-ները չեն տրոհվում, երբ նրանց հաջորդում է **եմ** օժանդակ բայը կամ **էլ** շաղկապը, օրինակ՝ Նա **զորուգիշեր քրտնաջան աշատելով** էր հասել հաջողության: Նա **բազկաթոռին նստած** էլ քնեց:

- Եթե անորոշ դերբայի տրական հոլովով ԴԴ-ն հետադաս հատկացուցիչ է կամ հանգման անուղղակի խնդիր, չի կետադրվում, օրինակ՝ Ես այնքան էլ հակված չեմ **նրա բոլոր ասածներին հավատալու:**

****

Բառապաշար
Աբբա- կաթոլիկ վանահայր
Ակութ-օջախ
Ակաղձուն-լեփ-լեցուն
Ականակիտ-վճիտ
Աղանդեր-մրգեղեն, քաղցրեղեն, թեթև ուտելիք
Աճպարար-ձեռնածու, հտպիտ, միմոս (ֆոկուսնիկ)
Ամբրոս-աստվածների կերակուր
Այգեկութ- բերքահավաք
Այտուցվել-ուռչել
Անթացուպ-հենակ
Անհեթեթ-տխմար, անիմաստ
Անհողդողդ-աներեր, կանգուն
Անողոք-դաժան
Անպաճույճ-առանց զարդարանքի
Անձկալի-ցանկալի
Անջրդի-չջրվող
Առինքնել-գրավել, թովել, գերել// առինքնող-գրավիչ
Ասպնջական-հյուրընկալ
Աստանդական-թափառական, պանդուխտ

Դաս 3

Նախադասության անդամներ. գոյականական անդամի լրացումներ

Վերհիշենք, որ բառերի այն խումբը, որ ունի միտք, կոչվում է նախադասություն: Նախադասության մեջ մեզ հայտնի խոսքի մասերը կարող են կատարել ամենատարբեր անդամների դեր: Այն դերը, որ կատարում է բառը նախադասության մեջ, անվանվում է նաև **պաշտոն:** Նախադասության գլխավոր անդամների մասին որոշակի պատկերացում ունենք. նախադասության գլխավոր անդամներն են **ենթական** և **ստորոգյալը**: Նրանք կարող են արտահայտվել

ամենատարբեր խոսքի մասերով: Բերենք ենթակայի մի քանի օրինակներ գոյականով, ածականով, թվականով, դերանունով, դերբայով.
ա. **Աշունը** իմ ամենասիրած եղանակն է:(գոյական)
բ. Գուաշի գույներից առաջինը միշտ **սպիտակն** է վերջանում:(ածական)
գ.**Յոթը** իմ սիրած թիվն է:(թվական)
դ.**Նա** այսօր շատ լավ է խաղում:(դերանուն)
Ե.**Կարդալը** ընկերոջս ամենասիրելի զբաղմունքն է:(բայ)
Ստորոգյալը նույնպես կարող է արտահայտվել ոչ միայն դիմավոր բայով, այլև մի շարք այլ խոսքի մասերով՝ գոյականով, ածականով, թվականով, դերանունով, մակբայով, անդեմ բայով (քանի որ այս ամենը կետադրության հետ կարծես թե կապ չունի,, չեմ ծանրաբեռնի նոր օրինակներով, վերևի նախադասություններում կան նաև օրինակ գոյականոց արտահայտված ստորոգյալներ):

Այսպիսով՝ նախադասության անդամների մասին խոսելիս պետք չէ շփոթել դրանք խոսքի մասերի հետ: Խոսքի մասերը 10-ն են՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն, վերաբերական: Սրանցից միայն առաջին 6-ն են նախադասության անդամ դառնում, իսկ նախադասության անդամները շաաատ-շատ են, յուրաքանչյուր խոսքի մասի բաժին է ընկնում նախադասության մի քանի անդամի դեր: Նույն գոյականը կարող է լինել ենթակա, ուղիղ խնդիր, բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչ, հանգման, անջատման, վերաբերության, ներգործող խնդիր, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, հնարավոր բոլոր տիպի պարագաներից: Նախադասության այն անդամները, որոնք գլխավոր անդամների՝ ենթակայի ու ստորոգյալի լրացումներն են կամ այդ լրացումների լրացումները, կոչվում են նախադասության երկրորդական անդամներ: Անդրադառնանք գոյականական անդամի լրացումներին:

Գոյականական անդամի լրացումներ

Գոյականական անդամի լրացումներն են **որոշիչը, հատկացուցիչը** և **բացահայտիչը:**

Որոշիչը բնութագրում է առարկաները՝ ցույց տալով դրանց որակական հատկանիշ, քանակ, հաջորդականություն, օրինակ՝ **կարմիր** վարդ, **լեռնային** գետ, **երեք** ընկեր, **տասներորդ** դասարան: Որոշիչը կարող է լինել նախադաս և հետադաս, ինչպես նաև որոշիչը կարող է բաղկացած լինել 1-ից ավելի բաղադրիչից:

Եթե որոշիչը նախադաս է, այն չի տրոհվում, եթե անգամ հարակատար դերբայով ԴԴ է:
Եթե գոյականը ունի մի քանի համազոր որոշիչ լրացումներ, ապա դրանք միմյանցից առանձնանում են ստորակետներով, օրինակ՝ Երեխաները **սև, մոխրագույն, կանաչավուն** ու շագանակագույն քարեր հավաքեցին:
Եթե որոշիչը ծավալուն է և հետադաս, այն կետադրվում է. հետադաս որոշչից առաջ դրվում է բութ, նրանից հետո՝ ստորակետ, օրինակ՝ Մի պատանի՝ **խաժ աչքերով,** մոտեցավ ինձ: Ծաղիկները՝ **բազմագույն, բուրավետ,** դրված էին ծաղկամանի մեջ:

Հետադաս որոշչից հետո ստորակետ չի դրվում, եթե այդ տեղում պետք է դրվի վերջակետ, միջակետ կամ բութ, օրինակ՝ Անտառներում աղբյուրներ կան՝ ականակիտ, քչքչան: Դիմացից գալիս էր մի տարեց մարդ՝ սպիտակ մորուքով. նրա դիմագծերի մեջ ինչ-որ ծանոթ բան կար: Հետս վերցրել էի վերջին էջերը՝ աղյուսակներով, բանաձևերով՝ ևս մեկ անգամ ստուգելու համար:

Առաջադրանք 1. Կետադրել տրված նախադասությունը

Ալանները՝ քաջ, խիզախ, աղեղնավոր, հարձակվել էին հայերի վրա:

Հատկացուցիչը ցույց է տալիս պատկանելություն, վերաբերություն: Այն միշտ դրված է լինում սեռական հոլովով, օրինակ՝ **քո** գիրքը, **Արամի** քույրը, **Կոմիտասի** արձանը, **ընտրելու** իրավունք:

Եթե նույն գոյականը ունի և՛ հատկացուցիչ, և՛ որոշիչ լրացումներ, ապա հատկացուցիչը նախորդում է որոշիչին, օրինակ՝ Ես ննջել էի **զեփյուռի մեղմ** շոյանքից:

Եթե հատկացուցչի և հատկացյալի միջև կա ուրիշ գոյական կամ անորոշ դերբայ, իմաստային շփոթությունը կանխելու համար հատկացուցչից հետո բութ է դրվում, օրինակ՝ Բոլորին զարմացրել էր տանտիրոջ՝ հյուրընկալության կանոններին հակասող պահվածքը:

Առաջադրանք 2. Կետադրել տրված նախադասությունները

Արևի՝ պատուհանից ներս ընկած շողերը ջերմացնում են տունը:

Աղջկա կրակից վառված ձեռքերը մրմռում էին:

Բացահայտիչը պարզաբանում է իր լրացյալի ով կամ ինչ լինելը: Բացահայտիչը իր լրացյալի նույն նշանակումն է՝ ուրիշ բառերով, ավելի մանրամասնած: Բացահայտիչը կարող է լինել բառ կամ բառակապակցություն (Հայաստանի մայրաքաղաքը՝ **Երևանը**// Երևանը՝ **Հայաստանի մայրաքաղաքը**)

Բացահայտչից առաջ դրվում է **բուլ**, հետո **գրեթե** միշտ դրվում է **ստորակետ,** օրինակ՝ Ջոկատի հրամանատարը՝ **խնամքով հարդարված մազերով մի երիտասարդ սպա,** հպարտ քայլքով անցավ զորանոցի բակով:

Բացահայտիչից հետո ստորակետ չի դրվում հետևյալ դեպքերում.

- **Եթե ստորակետի տեղում պահանջվում է դնել վերջակետ, միջակետ կամ բուլ, օրինակ՝ Վերջապես այցելեցի Ռուսաստանի արևմտյան մայրաքաղաք՝ Սանկտ Պետերբուրգ: Ընկերս մեկնել է Գորիս՝ իր ծննդավայրը. վաղուց չի տեսել ծնողներին: Բակում տեսնելով հարևանիս՝ Արմանին՝ ես մոտեցա նրան:**
- **Եթե բացահայտիչը սեռական հոլովով է, օրինակ՝ Անահիտի քրոջ՝ Կարինեի զգեստը շատ գեղեցիկ է:**
- **Եթե բացահայտիչին հաջորդում են որոշ կապեր, եմ բայը, կամ էլ շաղկապը, օրինակ՝ Հորեղբորս որդու՝ Դավիթի հետ էի գնացել այնտեղ: Հորեղբորս որդին՝ Դավիթն էր եկել ինձ հետ: Հորեղբորս որդին՝ Դավիթն էլ եկավ ինձ հետ:**

Բառապաշար
Բազրիք-աստիճանաձող
Բամբիշ-թագուհի
Բամբիռ-ժողովրդական երաժշտական գործիք
Բանսարկու- խառնակիչ
Բավիղ-լաբիրինթոս
Բարաք-փայտե կացարան
Բարկ-թեժ, կիզիչ
Բերանքսիվայր-երեսնիվայր
Բիբլիական-աստվածաշնչյան
Բեդվին-անապատաբնակ ցեղ
Բիրտ-կոպիտ, դաժան

Բոկոտն-ոտաբոբիկ
Բրաբիոն-զարդաբույս
Բվեճ-մեծ բու
Բուրվառ-խնկարկելու մետաղյա աման

Դաս 4 Հոլով և հոլովում

Գոյականի թեքումը կոչվում է հոլովում: Թեքումը կատարվում է հոլովների միջոցով: Թեքում ասելով հասկանում ենք գոյականի կրած փոփոխությունները այլ բառերի հետ հարաբերվելիս, նախադասություն, տեքստ կամ բանավոր խոսք կազմելիս:

Ժամանակակից հայերենում լեզվաբանական մշտական վեճի առարկա է հոլովների հարցը: Գիտնականների մի մասը կարծում է, որ հայերենում կա 5, մյուս մասը՝ 6, իսկ մյուս մասը՝ 7 հոլով: Քանի որ գոյականը ունի ուղիղ և ձևափոխված ընդամենը 5 տարբերակ, նպատակահարմար է ընդունել, որ հայերենում հոլովները 5-ն են:

Հայերենի հոլովներն են.

Ուղղական- ո՞վ, ի՞նչը (մարդ(ը), սենյակ(ը))

Սեռական/տրական-ո՞ւմ, ինչի՞(ն)-մարդու(ն), սենյակի(ն)

Բացառական-ումի՞ց, ինչի՞ց-մարդուց, սենյակից

Գործիական-ումո՞վ, ինչո՞վ-մարդով, սենյակով

Ներգոյական-որտե՞ղ, ինչո՞ւմ--------,սենյակում

Հոլովների նշանակությունը

Տարբեր հոլովաձևեր խոսքի մեջ կատարում են տարբեր դերեր՝ **պաշտոններ՝** ձևավորելով նախադասության տարբեր անդամներ:
Ուղղական հոլովաձև կարող են ունենալ՝
1.ենթական- **Արծիվը** սավառնում էր երկնքում:

2.ստորոգելին-Իմ սիրած ծաղիկը **մանուշակն** է:
3.կոչականը (միայն առանց հոդի)-**Սուրե՛ն,** արի՛ տուն:
4.որոշիչը (միայն առանց հոդի)- **Մայրաքաղաք** Երևանը 2803 տարեկան է:
5.իրի առումով ուղիղ խնդիրը-Մայրս շատ **ծաղիկներ** ունի:
6.Տեղի պարագան- Նա գնացել է **գյուղ:**
7.Չափի պարագան (միայն առանց հոդի)- Մի **պարկ** ալյուր գնեցի:

Սեռական-տրական հոլովաձև կարող են ունենալ՝
ո՞ւմ, ինչի՞ (ն)

1.հատկացուցիչը (միայն առանց հոդի)-**Բժշկի** ձեռագիրն անընթեռնելի էր:
2.անձի առումով ուղիղ խնդիրը- Անին խնամում է իր **տիկնիկին:**
3.հանգման խնդիրը-Մոտեցի՛ր **ծանրաձողին:**
4.նպատակի պարագան- Նա գնացել է **գնումների:**
5.տեղի պարագան-Հացը կդնես **սեղանին:**
6.ժամանակի պարագան-**Կեսգիշերին** հյուրեր ունեցանք:

Բացառական հոլովաձև կարող են ունենալ՝
ումի՞ց, ինչի՞ց

1.անջատման խնդիրը- **Վեճից** մի կերպ խուսափեցինք:
2.ներգործող խնդիրը- Ճառն օրորվում էր **քամուց**:// **Քամուց** քշված տերևները տարածվել էին փողոցով մեկ:
3.վերաբերության խնդիրը- **Աշխատանքից** խոսենք:
4.համեմատության խնդիրը- Արարատ լեռը **Արագածից** բարձր է:
++նաև մասնական ուղիղ խնդիրը,պատճառի պարագան, որոշիչը և այլն

Գործիական հոլովաձև կարող են ունենալ՝
ումո՞վ, ինչո՞վ

1.միջոցի խնդիրը- Ձեռքերը **սպիրտով** ախտահանեց:
2.ձևի պարագան- **Շտապելով** դպրոց էր գնում:
3.հիմունքի պարագան- Նախագահի **հրամանագրով՝** նա նշանակվեց առողջապահության նախարար:

Ներգոյական հոլովաձև կարող են ունենալ
որտե՞ղ, ինչո՞ւմ, ե՞րբ

1. տեղի պարագան- **Փողոցում** ոչ ոք չկար:
2.ժամանակի պարագան- Երեք **ամսում** դպրոցի նորոգումն ավարտվեց:

7 հոլովի կողմնակիցները առանձնացնում են սեռականն ու տրականը, որոնք իրականում ձևով նույնն են, ինչպես նաև ավելացնում են հայցական հոլով, որը իրականում սեփական ձև չունի. անձի դեպքում տրականի նման է, իրի դեպքում՝ ուղղականի:

Բառապաշար
Գանակոծել-գավազանով հարվածել, ծեծել
Գավիթ-նախասրահ
Գեղմ-բուրդ
Գժդմնել-մռայլվել, խոժոռվել
Գիլիոտին-կառափնատ
Գինարբուկ-բույս է
Գինարբուք-խնջույք
Գիրգ-փափուկ
Գիրթ-կտրուկ, շեշտակի
Դալայ-լամա-հոգևոր բարձրագույն տիտղոս Տիբեթում
Դե յուրե-իրավաբանորեն
Դե ֆակտո-փաստացի
Դեգերել-թափառել
Դեղձան-բաց դեղին
Դերձան-թել
Դշխուհի-թագուհի

Տնային աշխատանք
Բառապաշարի բառերով կազմել 20 նախադասություն
Հոլովների դասը կարդալ

Հոլովել տրված գոյականները -սեղան, ուրախություն, աղջիկ, ապուր, սեր,
Աստված (միայն եզակի թվով)

Ուշադիր լինել ընթերցանության համար հատկացված ստեղծագործություններին

Դաս 5

Բայական անդամի լրացումներ

Բայական անդամի լրացումներն են **խնդիրները** և **պարագաները:** Բայական անդամի լրացում կարող են ունենալ ինչպես դիմավոր (Ես **գնում եմ տուն**) այնպես էլ անդեմ բայերը (**Տուն գնացող** մարդը շտապում էր):

Խնդիրներ- ցույց են տալիս գործողության հետ կապված առարկաներ և լինում են 2 տեսակի՝ **ուղիղ և անուղղակի:**

Ուղիղ խնդիրը պատասխանում է **ո՞ւմ, ի՞նչը** հարցերին և ցույց է տալիս գործողությունը իր վրա կրող առարկա, օրինակ՝ Ես տեսա **գրիչն** ու **տետրերը** պայուսակի մեջ տեղավորող **աշակերտին:** (ուղիղ խնդիրը դրվում է իրի առման դեպքում՝ **ուղղական,** իսկ անձի առման գոյականների դեպքում **սեռական-տրական** հոլովներով)

Հանգման անուղղակի խնդիրը ցույց է տալիս առարկա, որին ուղղված է և որին հանգում է գործողությունը: Այն դրվում է կամ **սեռական-տրական** հոլովով, կամ ձևավորվում է **վրա, հետ, դեմ** կապերով,օրինակ՝ Ծանրորդն արդեն մոտեցել էր **ծանրաձողին:** Նա փորձում էր ազդել **ինձ վրա:** Աշակերտը վրդովված վիճում էր **ուսուցչի հետ**:

Անջատման անուղղակի խնդիրը ցույց է տալիս առարկա, որից անջատվում է մի բան: Այն դրվում է **բացառական** հոլովով, օրինակ՝ **Ծառից** մի տերև ընկավ:

Ներգործող անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի ներգործությունը կրում է ենթական: Ներգործող խնդիրը ձևավորվում է կամ **բացառական հոլովով,** կամ **սեռական-տրական+կողմից կապով,** կամ երբեմն **գործիական հոլովով**, օրինակ՝ Դրոշը ծածանվեց **քամուց:** Նա քննադատության ենթարկվեց **գրականագետների կողմից:** Դաշտերը ծածկվել էին **ձյունով:**

Վերաբերության խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի մասին խոսվում կամ մտածվում է: Այն կազմվում է **մասին**, **վերաբերյալ**, **շուրջ** կապերով կամ դրվում է **բացառական հոլովով**, օրինակ՝ Խոսում էին Լոռու հին-հին **քաջերից: Աշխատանքից** խոսենք: Ուզում եմ պատմել երեկվա **դեպքերի մասին:** Երեկ զրուցեցինք երեխաների **ապագայի շուրջ**:

Միջոցի անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի միջոցով կատարվում է գործողությունը: Այն դրվում է **գործիական հոլովով** կամ կազմվում է **միջոցով** կապական բառով, օրինակ՝ Ամբողջ օրը **բահով** հող էր փորել: Հնում լուրը տեղ էին հասցնում **սուրհանդակների միջոցով:**

Խնդիրները նախադասության մյուս անդամներից չեն տրոհվում, չեն կետադրվում:

Պարագաներ- **ցույց են տալիս գործողության հատկանիշներ և գործողության կատարման հանգամանքներ:**

Տեղի պարագան ցույց է տալիս գործողության կատարման տեղը: Այն ձևավորվում է հիմնականում **տեղի մակբայներով**, **գոյականի տարբեր հոլովաձևերով**, **տեղ նշանակող դերանուններով**, ինչպես նաև տեղի իմաստ արտահայտող **կապերի ու սեռական-տրական հոլովաձևի** կապակցմամբ, օրինակ՝ **ամենուր** փնտրել, **այնտեղ** լինել, նստել **գորգին, փողոցով** անցնել, **անտառում** մաքուր օդ շնչել, **տան առաջ** գտնվել**, հեռու** փախչել և այլն:

Ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ժաանակը: Ժամանակի մակբայ կարող են դառնալ **ժամանակի մակբայը**, **ժամանակ նշանակող** գոյականները, **համակատար, հարակատար, անորոշ** դերբայները և **երբ** դերանունը՝ ուղիղ և հոլովված տարբերակներով, օրինակ՝ **երբեք** չխաբել, **մի քանի օրով** բացակայել, **տեսնելուն պես** կանգ առնել, **ընկերոջից հետո** մտնել քննության և այլն:

Ձևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը: Ձևի պարագա են դառնում **ձևի մակբայները** (դանդաղ, արագմ հապճեպ, բարեկամաբար, հիմնովին, հանկարծ, հազվադեպ, մեկ առ մեկ և այլն), **գործողության ձևի իմաստ ունեցող դերանուններ** (այսպես, այդպես, այնպես,նույնպես, ինչպես), **գոյականները, հարակատար** և **անորոշ** դերբայները, կապական մի շարք կառույցներ, օրինակ՝ **զգուշորեն** մոտենալ, **ինչպե՞ս** վարվել, **տխուր** նայել, **նստած** զրուցել, **վախենալով** ասել, **մյուսների նման** լինել, վերաբերվել **որպես բարեկամի:**

Պատճառի, պայմանի, չափի պարագաները ցույց են տալիս համապատասխանաբար գործողության կատարման պատճառը, պայմանը, չափը: Օրինակ՝ Նրա մաշկը **արևից** կարմրել էր (պատճառի պարագա): **Ցանկություն ունենալու դեպքում** կարող ես վերականգնել պայմանագիրդ (պայմանի պարագա): Մենք նրան **բազմիցս** զգուշացրել ենք:

Կետադրվող պարագաներ

ա.**նպատակի պարագան** նախադասության մեջ վերջադաս լինելու դեպքում կարող է կետադրվել: Անորոշ դերբայի տրական հոլովով ԴԴ-ով նպատակի պարագայից առաջ միշտ բութ է դրվում, օրինակ՝ Բոլորը եկել էին՝ **նրան աշխատանքի ընդունվելու առթիվ շնորհավորելու:** Մյուս բոլոր վերջադաս նպատակի պարագաներից առաջ բութ է դրվում, եթե **նպատակի պարագան անմիջապես չի հաջորդում ստորոգյալին,** իսկ եթե նպատակի պարագան ստորոգյալից անմիջապես հետո է, չի կետադրվում, օրինակ՝ Նա խանութ գնաց **հացի:** Նա գնաց խանութ՝ **հացի:** Նա ամեն ինչ կզոհաբերի **հանուն այդ գործի հաջողության:** Նա կզոհաբերի ամեն ինչ՝ **հանուն այդ գործի հաջողության:** Նա հյուրերին մոտեցավ **ողջունելու:** Նա մոտեցավ հյուրերին՝ **ողջունելու:**

բ. կետադրվում են կապերով կազմված հիմունքի և զիջման պարագաները: Կետադրվող առաջադաս և վերջադաս հիմունքի և զիջման պարագաները տրոհվում են բութով, միջադասները՝ 2 կողմից ստորակետերով, օրինակ՝ **Ըստ տնօրենի կարգադրության՝** բոլորը պետք է աշխատավայրում լինեին վաղ առավոտյան: Ես ամեն ինչ արեցի՝ **քո ցանկությանը համապատասխան:** Զբոսաշրջիկներին, **նայած եղանակին,** որևէ տեղ կտանեն: **Հակառակ մեր վատ նախազգացմանը՝** ամեն ինչ հրաշալի անցավ: Նա խանգարում էր՝ **փոխանակ օգնելու:** Տիգրանը, **որոշ խստությամբ հանդերձ,** չար մարդ չէ: Այս պարագաները չեն կետադրվում, եթե նրանց հաջորդում է **եմ** բայը կամ **էլ** շաղկապը, օրինակ՝ Աշխատակիցը **ղեկավարության հանձնարարությանը հակառակ** էր շարունակել այդ գիտափորձը: Մենք **մեր կայացրած որոշման համաձայն** էլ կձեռնարկենք անհրաժեշտ քայլերը:

գ. Անորոշ դերբայի գործիական հոլովով կամ հարակատար դերբայով ԴԴ-ներով արտահայտված պարագաները կետադրվում են ԴԴ-ի կետադրման կանոններով:

Բառապաշար
Եղրևանի-յասաման
Երախտիք- բարի գործ, ավանդ
Երամակ- ձիերի, նաև փղերի խումբ

Երասան- սանձ
Երաշխիք-ապացույց
Երկնամուխ-երկինք մխրճված
Երկնել-ծնել
Երկնչել-վախենալ
Երփներանգ-գույնզգույն
Զոդել-կցել
Զորավիգ- աջակից, օգնական
Էսպերանտո-արհեստական լեզու է՝ ստեղծված 20-րդ դարում

Տնային աշխատանք՝
Կազմել նախադասություններ
Վերլուծություն գրքերի մասին

Ա. «Նեսոյի քարաբաղնիսը»
Բ. «Միրհավ»

Դաս 6 Լրացումներ 5-րդ դասի վերաբերյալ (խնդիրներ և պարագաներ)

Խնդիրների մասին

1.Անհրաժեշտ է չշփոթել տրական հոլովի ձև ունեցող ուղիղ խնդիրը հանգման անուղղակի խնդրից: **Ուղիղ խնդիր** ունենում են միայն ներգործական սեռի բայերը, օրինակ՝ Ես **նայեցի** դիմացինիս **աչքերին** (հանգման խնդիր): Նա **տեսավ** այգում հավաքված **երեխաներին (**ուղիղ խնդիր):
2. Միևնույն՝ բացառական հոլովով դրվելու հետևանքով կարող են նման լինել **անջատման և ներգործող խնդիրները:** Դրանք կարող են տարբերակվել իմաստի հիման վրա, բայի սեռից ելնելով, ինչպես նաև խնդիր պարունակող ներգործականի փոխելու հնարավորությունը ստուգելով: Օրինակ՝ Այդ **բանաստեղծությունից մնաց** երկու քառատող (անջատման խնդիր): Այդ **բանաստեղծությունից** նա շատ **հուզվեց** (ներգործող խնդիր, ‘փոխակերպումը՝ Այդ բանաստեղծությունը նրան շատ հուզեց:)
3.Միջոցի անուղղակի խնդիրը կարող է նման լինել գործիական հոլովով դրված ներգործող խնդրին: Այս երկու խնդիրները տարբերակելու համար պետք է հիշել, որ եթե բայը ներգործական կամ չեզոք սեռի է, չի կարող ներգործող խնդիր ունենալ, այսինքն՝ նման դեպքերում լրացումը միջոցի խնդիր է, օրինակ՝ Ջուրը

տաքացրին վառարանի **կրակով:** Իսկ եթե բայը կրավորական սեռի է, կարող է ունենալ և՛ միջոցի խնդիր, և՛ ներգործող խնդիր լրացում: Այդ դեպքում կարելի է փորձել կրավորական կառույցը փոխակերպել ներգործականի: Եթե լրացումը դառնա **ենթակա,** ուրեմն ներգործող խնդիր է,իսկ եթե փոխակերպելը անհնար լինի, և հետևաբար լրացումն էլ նույն կերպ մնա,ուրեմն միջոցի խնդիր է: Օրինակ՝ դաշտերը հեղեղվել էին գետի **ջրով: >** Գետի **ջուրը** հեղեղել էր դաշտերը (ներգործող անուղղակի խնդիր): Երշիկը կտրատված էր սուր **դանակով** (միջոցի անուղղակի խնդիր). չի լինի այսպես՝ Սուր **դանակը** կտրատել էր երշիկը:

4. Ուղիղ խնդրի հետ չպետք է շփոթել բաղադրյալ ստորոգյալի անվանական հատվածը,երբ հանգույցը ոչ թե **եմ** բայն է, այլ ուրիշ վերացական բայեր, ինչպես օրինակ ՝ դառնալ, թվալ, երևալ, համարվել, հանդիսանալ, պատկերվել, կոչվել, նշանակվել, օծվել, գալ, զգալ, աշխատել, ձևանալ, ձևացնել, ընկնել, կանգնել, հոչակվել, ընտրվել, մնալ, առաջադրվել և այլ բայեր: Օրինակ՝ «Ծովիկը մի զարմանալի **աղջիկ** է երևում» նախադասության մեջ **աղջիկ** բառը ոչ թե ուղիղ խնդիր է, այլ բաղադրյալ ստորոգյալի ստորոգելի:

Պարագաներ

1. Շփոթություն կարող է առաջանալ **որպես, իբրև** կապերով ձևի պարագաների և մասնական բացահայտիչի նմանությունից, որը կարող է նաև հանգեցնել կետադրական սխալի: Անհրաժեշտ է ճշտել, թե որ բառին է լրացնում կապակցությունը: Եթե նրա գերադաս անդամը առարկա ցույց տվող բառ է, ապա լրացումը բացահայտիչ է և ունենում է բացահայտիչի կետադրություն, օրինակ՝ Մենք Գևորգին դիմավորեցինք՝ **իբրև հերոսի:** Իսկ եթե գերադաս անդամը բայ է, ապա լրացումը ձևի պարագա է և չի կետադրվում, օրինակ՝ Նա իրեն պահում էր **իբրև հերոս:**
2. Տրական հոլովով նպատակի պարագան նույն հոլովով դրվելու հետևանքով հաճախ նմանվում է հանգման անուղղակի խնդրին և կարող է շփոթվել նրա հետ: Այդպիսի շփոթությունը կարող է հանգեցնել նաև կետադրական սխալի, քանի որ հանգման խնդիրը չի կետադրվում, իսկ նպատակի պարագան կարող է կետադրվել, օրինակ՝ Մենք պատրաստ էինք (ինչի՞) **նրան դիմավորելու:** (հանգման անուղղակի խնդիր)- Մենք օդանավակայան գնացինք՝ **նրան դիմավորելու** (նպատակի պարագա): Եթե իմաստին նայելով այնուամենայնիվ դժվարանում ենք կողմնորոշվել՝ հանգման խնդիր է, թե նպատակի պարագա, կարող ենք փորձել որոշիչ հոդ ավելացնել: Հանգման խնդիրը կարող է լինել նաև որոշիչ հոդով, իսկ նպատակի պարագան՝ ոչ: Այսպես օրինակ կարող ենք նաև

ասել Մենք պատրաստ էինք նրան **դիմավորելուն**, բայց չենք կարող ասել մենք օդանավակայան գնացինք՝ նրան **դիմավորելուն:**

Բառապաշար

Ըղձալի-ցանկալի
Ընդսմին-միաժամանակ
Ընդունայն-իզուր
Ընթերակա-օգնական (assistant)
Ընկրկել-զիջել, նահանջել
Ընչացք-բեղ
Ընչաքաղց-ագահ
Ըստ կարելվույն-հնարավորության չափով
Թանզիվ-մառլյա
Թարփ-ուռկան,ձկնորսական ցանց
Թեզանիք-մանժետ
Թերմացք-մնացորդ
Թիրախ-նշանակետ
Թմբիր-թմրություն
Թյուր-սխալ
Թնջուկ-խճճված թել

Դաս 7 Նախադասությանը ներդրված միավորներ

Պարզ նախադասության մեջ կարող են լինել բառեր և բառակապակցություններ, որոնք քերականորեն կապակցված չեն նախադասության անդամներին: Դրանք **ներդրված միավորներ** են, որոնցից են **կոչականը, միջանկյալ բառերն ու կապակցությունները:**

Կոչական

Կոչականը խոսակցին ցույց տվող բառ է, որով խոսողը դիմում է խոսակցին: Քանի որ խոսակից լինում է անձը, առաջին հերթին կոչական դառնում են անձ ցույց տվող գոյականները: Կոչականի վրա շեշտ է դրվում, և այն ստորակետով

առանձնանում է նախադասության մեջ եղած մյուս բառերից, օրինակ՝ **Տղա՛ս,** մոտեցի՛ր ինձ:
Կոչական կարող է լինել նաև գոյականաբար օգտագործված ածականը, օրինակ՝ **Սիրելի՛ս,** այսօր կարող ես ինձ հյուր գալ: Գեղարվեստական պատկերավոր խոսքում կոչական կարող են դառնալ իր ցույց տվող գոյականները, օրինակ՝ Ողջո՛ւյն քեզ, **արև՛,** ողջո՛ւյն քեզ, **գարո՛ւն**:

Երբ կոչականը լրացումներ ունի, դրանք տրոհվում են կոչականի հետ, իսկ շեշտը լրացումների նախադաս լինելու դեպքում անցնում է կոչականին անմիջապես նախորդող լրացմանը, եթե այն դերանուն չէ, օրինակ՝ Ես քեզ կպատմեմ ոսկե հեքիաթներ, **իմ սիրո՛ւն մանուկ, իմ քնքո՛ւշ մանուկ**... Քեզ երբեք սիրտս չի մոռանա, **իմ մաքուր, առաջի՛ն իմ անուրջ:**

Նույն կերպ շեշտվում են կոչականին նախորդող գրքային **ով** և խոսակցական **այ** բառերը, օրինակ՝ **Ո՛վ արքա,** ի՞նչն է քեզ զայրացրել:

Լրացում ունեցող կոչականները ճիշտ կետադրելու համար պետք է հիշել, որ կոչականի շեշտը/բացականչական նշանը **չի անցնում** նախադաս լրացում դարձած դերանվանը և հետադաս լրացումներին, օրինակ՝ ...**Շո՛ւն, կարոտի՛ իմ եղբայր, դառնաթախի՛ծ իմ ընկեր**...// **Կապո՛ւյտ աղջիկ, քո՛ւյր իմ հեզ,** դու հետ չե՞ս գալու:

Հուզական խոսքում կոչականի կամ նրա լրացման վրա շեշտի փոխարեն կարող է դրվել բացականչական նշան, օրինակ՝ Փռվի՛ր, փռվի՛ր իմ հոգում, **խ խաղաղությո՛ւն** անեզերք:

Միջանկյալ բառեր և բառակապակցություններ

Միջանկյալ բառերն ու բառակապակցությունները մտնում են նախադասության կազմի մեջ, սակայն քերականորեն չեն կապվում նախադասության անդամներից որևէ մեկի հետ, հետևաբար իրենք նախադասության անդամ չեն դառնում: Նրանք արտահայտում են խոսողի վերաբերմունքը ասվածի նկատմամբ, ասվածի գնահատումը:

Միջանկյալ են լինում և տրոհվում են ձայնարկությունները (օ՛, օ՛հ, ա՛խ, վա՛խ,վա՛յ, օ՛ֆ, է՛յ, հե՛յ և այլն), ասվածը հաստատող (հաստատական) վերաբերականները **(իրոք, հարկավ, իսկապես, արդարև, անշուշտ,անկասկած, անտարակույս, ինչ խոսք և այլն),** ափսոսանք արտահայտող վերաբերականները (ավա՛ղ, ցավոք, ցավոք սրտի), **այո**

հաստատական և **ոչ** ժխտական վերաբերականները, զիջական վերաբերմունք արտահայտող վերաբերականները (ինչևէ, ինչևիցե, ինչ էլ որ լինի, համենայն դեպս,այնուամենայնիվ և այլն), ենթադրություն արտահայտող **ըստ երևույթին** վերաբերականը, կամային **դե-**ն և այլն:

Հաստատական վերաբերականները չեն տրոհվում, եթե իմաստով (այլ ոչ թե քերականորեն) կապվում են ոչ թե ամբողջ նապադասության, այլ նախադասության մեկ անդամի հետ, որից առաջ դրված են, օրինակ՝ Այդ **անտարակույս խելացի** երիտասարդը մեծ համբավ էր վայելում մաթեմատիկոսների շրջանում:

Որոշ տարածված շփոթություններից խուսափելու համար պետք է հիշել, որ **ասես, կարծես, ահա** վերաբերականները չեն տրոհվում, իսկ բաղադրիչ նախադասություններ կապող **սակայն** շաղկապը կարող է տեղաշարժվել, դրվել իրեն հաջորդող նախադասության մեջտեղում և այդ դեպքում վերածվում է միջանկյալ բառի, օրինակ՝ Մենք սպասեցինք, **սակայն** նա չեկավ (շաղկապ): Մենք սպասեցինք, նա, **սակայն,** չեկավ (միջանկյալ բառ):

Այնուամենայնիվ վերաբերականի հետ չպետք է շփոթել **այնուամենայնիվ** շաղկապը, որը զուգադիր շաղկապների զույգ է կազմում **թեև, չնայած, թեպետ, որքան էլ** շաղկապների հետ, օրինակ՝ **Չնայած** երեկոյան անձրև էր գալու, **անյուամենայնիվ** աղջնակը ոգևորությամբ պատրաստվում էր հավաքույթին:

Բառապաշար
Ժպիրի-անամոթ
Ժուժկալ-զուսպ, չափավոր
Ի դերև ելնել-իզուր անցնել
Ի հեճուկս-հակառակ
Ի տրիտուր-որպես հատուցում
Ինչք- ունեցվածք
Լաբիրինթոս-բավիղ
Լաջվարդ-կապույտ, երկնագույն
Լինչի դատաստան-ինքնադատաստան
Լղպոր-վտիտ, նիհար
Խավարտ- 1.բույսի կամ պտուղի խավը 2.ճաշի համեմունք
Խարանել-դաջել, դրոշմել
Խոնջանք-հոգնություն
Խորշ-ճեղք, խոռոչ, անցք
Խորշակ-անապատի քամի

Խորշոմ-կնճիռ
Խռչակ-կոկորդ
Խրթին-բարդ, դժվար
խուլանալ-գունաթափվել

Դաս 8 Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք

Խոսողը երբեմն մեջբերում է իր կամ ուրիշ ինչ-որ մեկի խոսքը, որն էլ հենց մեջբերվող խոսքն է: Եթե խոսքը բառացի է մեջբերվում, այն կոչվում է մեջբերվող ուղղակի խոսք, օրինակ.
-Ես վաղը Երևան եմ գնալու,-ասաց ընկերս:
Սակայն հենց այն նույն խոսքը կարելի է մեջբերել նաև անուղղակիորեն, **ոչ բառացի:**
Ընկերս ասաց, որ ինքը վաղը Երևան է գնալու:
Նույն կերպ խոսողը հենց իր նախկինում ասած խոսքը կարող է մեջբերել ինչպես **ուղղակիորեն**, այնպես էլ **անուղղակիորեն,** օրինակ.
Ես քեզ խնդրել էի.- Ոչ ոքի չհայտնես այդ գաղտնիքը// Ես քեզ խնդրել էի, որ ոչ ոքի չհայտնես այդ գաղտնիքը:

Ուղղակի խոսքը հեղինակի խոսքին կարող է կապվել ասացական իմաստ ունեցող տարբեր բայերով, օրինակ՝ **ասել, պատասխանել, հայտնել, հաղորդել, զեկուցե**լ և այլն, օրինակ.
-Հյուրերն արդեն եկել են,-**հայտնեց** օգնականը տնօրենին:

Երբեմն հեղինակի խոսքը և ուղղակի խոսքը կապակցվում են ոչ թե ասացական իմաստ ունեցող բայերով, այլ մեջբերվող խոսքի հեղինակի հոգեվիճակը արտահայտող բայերով, օրինակ.
-Ինչո՞ւ ոչ մի փաստաթուղթ դեռևս պատրաստ չէ,-**զայրացավ** հիմնարկի ղեկավարը:

Ուղղակի խոսքը բաժանվում է **2 տեսակի՝ հնչող և չհնչող:** Հնչող է բարձրաձայն ասված խոսքը, իսկ չհնչող է մտածմունքը, նամակում կամ գրավոր այլ տեքստում գրված խոսքը: Իհարկե, գրվածը հնարավոր է ընթերցել, և ակամա այն դառնում է հնչող, բայց իրենց կետադրությամբ հնչող և չհնչող մեջբերվող խոսքերը տարբերվում են: Հնչող մեջբերվող խոսքը կետադրվում է անջատման գծով, իսկ չհնչողը գրվում է չարկերտերի մեջ:

Ուղղակի խոսքի կետադրությունը

1.Որպես հնչող խոսք մեջբերվող ուղղակի խոսքը կետադրվում է հետևյալ ձևով:
Եթե հեղինակի խոսքը նախադաս է, ապա նրանից հետո դրվում է միջակետ, իսկ ուղղակի խոսքը գրվում է նոր տողից, անջատման գծով, մեծատառով, օրինակ.

Տեսնելով մեզ բակում՝ մայրիկը հարցրեց.
-Ե՞րբ կգաք տուն՝ հաց ուտելու:
Եթե հեղինակի խոսքը միջադաս կամ վերջադաս է, ապա նրանից առաջ դրվում է ստորակետ-գիծ *(կամ կախման կետեր-գիծ)*, իսկ հեղինակի միջադաս խոսքից հետո դրվում է կամ ստորակետ-գիծ, կամ միջակետ-գիծ, կամ վերջակետ-գիծ:
Ստորակետ-գիծը հեղինակի և մեջբերվող խոսքի տրոհման հիմնական միջոցն է, իսկ միջակետի, վերջակետի կամ կախման կետերի գործածությունը պայմանավորված է նրանով, թե տվյալ դեպքում հեղինակի խոսքին նախորդող ու հաջորդող հատվածները իրար նկատմամբ շարահյուսական ինչ հարաբերակցության մեջ են: Օրինակ՝ **Մենք ոչինչ չենք կարող անել**. **ամեն ինչ վերջացած է** նախադասության բաղադրիչները ունեն պատճառահետևանքային կապ և պահանջում են միջակետ: Եթե այս նախադասությունը ընդմիջվի հեղինակի խոսքով, ապա հեղինակի խոսքից հետո կդրվի **միջակետ-գիծ**, ինչպես՝ Մենք ոչինչ չենք կարող անել,-ասաց մարզիչը.-ամեն ինչ վերջացած է:

Այլ օրինակներ

-Ես,- ասաց ճամփորդը,- շատ հեռվից եմ գալիս:
-Խավար գիշեր է,- ասաց տանտերը.-չես կարող քաղաք հասնել ոտքով:
-Ամեն ինչ ավարտված է,- տխրությամբ ասաց իշխանը:- Ձիերը թամբե՛ք և մեկնե՛ք:
-Ես...-կմկմաց տղան,-ես չէի ուզում ձեզ վնասել:

2.Որպես չհնչող խոսք մեջբերվող ուղղակի խոսքը կետադրվում է հետևյալ ձևով:
Եթե հեղինակային խոսքը նախադաս է, ապա նրանից հետո դրվում է միջակետ, իսկ ուղղակի խոսքն առնվում է չակերտների մեջ, օրինակ՝ **Նա գրում է**. **« Վաղը վերադառնալու եմ»: Սոկրատեսը ասել է**. **«Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»:**

Եթե հեղինակի խոսքը միջադաս է, ապա, ինչպես մեջբերվող հնչող խոսքի դեպքում, նրանից առաջ կարող է դրվել **ստորակետ-գիծ** կամ **կախման**

կետեր-գիծ, իսկ նրանից հետո՝ **ստորակետ, միջակետ, վերջակետ-գիծ,** և ուղղակի խոսքն առնվում է չակերտների մեջ, օրինակ՝ **«Ես,-գրում էր նա,-շուտով կվերադառնամ»: «Մենք ավարտել ենք աշխատանքը,-գրում էր որդին:- Մի քանի օրից ես կվերադառնամ տուն»:**

Եթե հեղինակի խոսքը վերջադաս է, ապա ուղղակի խոսքն առնվում է չակերտների մեջ, և նրանից հետո դրվում է ստորակետ-գիծ, օրինակ՝ **«Ես շուտով կվերադառնամ»**,-**գրում էր նա:// ««Շունն ու կատուն» Թումանյանը գրել է *1886* թվականին»,-գրված էր շարադրության մեջ:**

Եթե մեջբերվող կարճ ուղղակի խոսքը հաջորդում է հեղինակի խոսքին, կարող է տրոհվել նաև բութով. այդ դեպքում գրվում է փոքրատառով և նույն տողում, օրինակ՝ **Նա ասաց՝ կօգնեմ և կաջակցեմ: // Նա ժպիտով ասաց՝ գերազանց եմ հանձնել քննությունը:**
Հարցական նախադասությամբ արտահայտված ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելիս կետադրվում է հետևյալ սկզբունքներով:
ա.Եթե ուղղակի խոսքում կան հարցական-երկբայական վերաբերականներ, ապա նրանց հարցական նշանը անուղղակի խոսքում պահպանվում է, օրինակ՝- **Մի՞թե նա վերադարձել է,-հարցրեց նկարիչը:// Նկարիչը հարցրեց, թե մի՞թե նա վերադարձել է:**
բ. Եթե ուղղակի խոսքում կան հարցական դերանուններ, ապա անուղղակի խոսքում նրանց վրա հարցական նշան չի դրվում, օրինակ՝ **-Ե՞րբ ես վերադարձել,-հարցրեց ընկերս: Ընկերս հարցրեց, թե երբ եմ վերադարձել:**
Գ. Եթե ուղղակի խոսքում չկան ոչ հարցական-երկբայական վերաբերականներ, ոչ հարցական դերանուններ, ապա անուղղակիի վերածվելիս հարցական նշանը պահպանվում է, և կարող է ավելացվել **արդյոք** բառը, օրինակ՝ **Դու այցելեցի՞ր տատիկիդ,-հարցրեց ինձ մայրս:// Մայրս ինձ հարցրեց, թե ես այցելեցի՞ *(արդյոք)* տատիկիս:**

Բառապաշար

Ճեգ-արշալույս, առավոտ
Ճերպ-1.ճեղք, արանք, անցք 2.կատար, գագաթ
Ճեքծեքուն-կոտրատվող, սեթևեթող
Ճոպ-գործվածքի թելերից յուրաքանչյուրը
Կածան-շավիղ, արահետ
Կաճառ-ակադեմիա
Կարեվեր-ծանր վերքեր ստացած (կարի-ուժգին, ծանր, սաստիկ)
Կերկերուն-խզված, խռպոտ

Կերոն-ջահ, մոմ
Կթղա-գավաթ, ըմպանակ
Կխտար-վիթ, այծյամ, եղնիկ
Կնգուղ-սրածայր գլխարկ, վեղար (հոգևորականներն են կրում)
Կնդրուկ-անուշահոտ խեժ
Կոհակ-ջրի ալիք
Կոճգամ- սևեռակ (կնոպկա)
Կտտանք-չարչարանք
Կտրիճ-քաջ
կտրիչ-կտրող